

Ամանորի եւ մերձակայ Ս. Ծննդեան տօնի առթիւ ՍԻՈՆ իր բոլոր աշխատակիցներուն, բաժանորդներուն ու համակիրներուն եւ սիրեցեալ Ազգիս լուսեան կը ներկայացնէ Ս. Ս. Բառոյս Հոգեւոր Պետիմ՝ Ն. Ա. Ս. Պատրիարք Հօր եւ բովանդակ Միաբանութեան արագիւն շնորհաւորութիւնները եւ հոգեւանդն բարեմաղթութիւնները: Նա ինքն որ Յոյսն է ամենայն բարեաց՝ թո՛ղ շնորհէ բովանդակ աշխարհի խաղաղութիւն, ո՛չ այնպէս ինչպէս կը խոստանան մարդիկ միմեանց, այլ այնպէս ինչպէս ինքն միայն գիտէ տալ մեզի, իբր Աղբիւր յաւերժական սիրոյ եւ հեմարիտ խաղաղութեան:

Բ Ա Ժ Ն Ե Ք Ի Ն

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգինն է՝ բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 6:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՈՒԻ Է

Հասցէ՝ Rédaction de la Revue Arménienne SION

Patriarcat Arménien, Jérusalem-Palestine

Լ Ո Տ Ս Տ Ե Ս Ա Ի

ՕՐԱՅՈՅՑ

1939

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՊՐԻՍՏՈՍԻ

(ԸՍՏ ՀԻՆ ՏՈՄԱՐԻ)

Եւ

ԲՈՒՆ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ՏՆԼԱ - ՏՆԼԲ = 4431 - 4432

Եւ

ՏՈՄԱՐԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ՌՅԶԸ - ՌՅԶԹ = 1388 - 1389



ԵՐՈՒՍԱԴԷՄ

ՅՊԱՐԱՆ ՍՐՐՈՑ ՑԱԿՈՐԵԱՆՑ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ԲԱՐԻ ԿԱՂԱՆԴ

ՄԵՆԵԱՅԱՐԳ ՏԻԱՐԲ

Ամենուն յայտնի է թէ Լիբանանի Մամբլթէյն զիւղին մէջ 15 տարիներէ ի վեր Հոգևոր Պետերու նախածնունդեամբ գոյութիւն ունէր Հայ Հիւժախտաւորաց Ազգային Բուժարան մը ուր պատասպարուեցան մօտաւորապէս 900 հոգի մեր հիւանդ եղբայր ու քոյրերէն:

Հաստատութեան Խնամակալ-Վարչութիւնը կազմող հոգևոր պետեր, բժիշկներ եւ անասագէտ ազգայիներ սկիզբի օրէն նկատի ունեցան այդ բուժարանի օղն ու կլիմային թորախաի դարձանումին ան- նպաստ ըլլալու պարագան ու որոշեցին Լիբանանի բարձունքներուն վրայ կանգնել նոր բուժարան մը:

Ուրախութեամբ կուգանք յայտնել թէ տոյն ծնունդը յաջողութեամբ պատկուեցաւ Աստուծոյ օգ- նութեամբ եւ շնորհիւ ձեր ղրկած նուէր ու լումաներով, եւ այսօր ունինք 3 յարկանի բուժարան մը մօտ 80 մեծ ու փոքր սենեակ սրահներով, ծովու մակերեսէն 1,100 մէթր բարձր, եւ թորախաի համար ամէնա- յարմար չոր եւ առողջարար կլիմայով օժտուած, միանգամայն զեղատեսիլ, Շէնքը եւ ներքին կահաւո- բունքը արդիական ներկայ պայմաններով կազմակերպուած Լիբանանի Ազունիյէ զիւղին մօտ՝ օդով ու ջու- րով անմահական եւ տեսարաններով զրախտային, ուր փոխադրած ենք մեր հիւանդները 4 ամիսէ ի վեր: Առայժմ բուժարանի մէջ ունինք 72 անկողիններ իրենց աստիճաններով, հիւանդներուն ներկայ թիւն է մօտաւորապէս վաթսուն:

Մեր այս ծնունդին համար ուր որ զիմեցինք աղքատ ու հարուստ, մեծ ու փոքր, ունեւոր եւ չքաւոր, առանց խտրութեան իրենց կարողութեան չափով համեստ լումաներովը քաջաբերեցին մեզ:

Հոգևոր Պետեր այս հաստատութեան Խնամակալ-Մամբլթէյն կը կազմեն, իսկ բժշկական ֆիզը կը կազմեն Տիարը Տօրթ. Յ. Եէնիգօմշեան բժշկապետ, Տօրթ. Գ. Վարդապետեան փոխ բժշկապետ, Տօրթ. Տ. Պէրպէրեան մանրէարան (պարթերէօլօժիսթ) Տօրթ. Ե. ձիտէճեան վիրաբոյժ, եւ Տօրթ. Շ. Սիւլաճեան մասնագէտ ներքին մնայուն բժիշկ:

Խնամակալ-Վարչութիւնը իր ներքին բժիշկը անցնալ տարի 5 ամիս Զուիցերիա զրկեց. հոն նշա- նաւոր թորախաւանդներու մէջ վերջին ձեւով թորախաի դարձանումի նորութիւնները ուսումնասիրելով վերագործաւ նոր պաշարով ու այժմ մեր հաստատութեան մէջ նոյն մէթաներով կը դարձանուին մեր հի-ւանդները:

Նոր Շէնքը թէեւ լրացած ու մեր հիւանդները հոն փոխադրուած են ու իրենց հանգիստը ապա- հովումը է, սակայն անոր կահաւորման եւ բժշկական գործիքներու անհրաժեշտ կարիքներ ունինք, եւ այդ կարիքները հայթայթելու համար նիւթակտնի կը կարօտի:

Սիրելի հայրենակիցներ,

Ահա հաստատութիւն մը որուն շուրջ հաւաքուած են առանց խտրութեան հայ հոգևոր պետեր, տարբեր կազմակերպութիւններ բարեփրական հաստատութիւններ, մէկ խօսքով ընդհանուր ազգը մէկ ճա- կատ կազմած, աշխարհի ամէն կողմը համերաշխ կը պայքարին եւ կ'օգնեն թորախաի ֆիրաններուն մէջ տառապող իրենց հիւանդ եղբայր ու քոյրերուն փրկութեան համար: Բարի Սամարալիին պէս վիրաւոր թորեալն ձէթ ու իւղ թափելու բարի գործով: Այն հիւանդները հալած ու մաշած, փոսացած աչքերով տկնդէա ձեր ղրկելիք նուէրներուն կ'սպասեն, Աստուծոյ արեւին տակ, քիչ մը աւելի երկար ապրելու կամ բուժուելու յոյսով, որոնց մատղաշ զաւակները ու ծնողքը անհամբեր բուժուումէն ապագինած վե-րադարձին կ'սպասեն օրդիական համարոյր եւ ծնողական քնքայ չէրը վայելելու համար:

Ուրեմն սիրելի եղբայրներ ու քոյրեր, Նոր Տարւոյ եւ Սուրբ Նինգեան առթիւ կրկին յիշեցէր այս հաստատութիւնը, հոն ապրող մեր հիւանդ եղբայր ու քոյրերը եւ օգնութեան ձեռքերնիդ երկարեցէր հե-ռաւոր եւ մօտիկ ասիւրէն առատօրէն: Տարեկան նուէրնուղ վրայ բան մըն ալ աւելցուցէր յատկապէս ա-նոր կահաւորման եւ գործիքներու գնման ֆոնտին ու վարձատրութիւննիդ անպակաս ստացէր ԱՆԿԷՆ ՈՐ ՀԻՒՄԷՆԴ ԷՒ ՈՒ ԽՆԻՒ ՏԵՍ ԵԿԱՄԲ պիտի ըսէ վերջին օրը: Մատթ. Իե. 36, Ղուկ. Ժ. 31, Բ. Կորնթ. Ը, 2:

Յիշեցէ՛ր Յիսուսի խօսքը, «Աւելի երանելի է տալը, քան թէ առնելը»:

Մենամբ ողջօյնիւ եւ Ազօթարար

Խնամակալութիւն Հայ Հիւժախտ. Ազգ. Բուժարանին

Երէց

Նախագահ

Վեր. Ե. Յ. ՀԱՏԻՏԵԱՆ

ԵԴԻՇԷ ԱՐՔ. ԿԱՐՕԵԱՆ